# ԲԱՑ ՆԱՄԱԿ ԺԻՐԱՅՐ ՍԵՖԻԼՅԱՆԻՆ

*Posted on June 1, 2013 by Keghart*



**Category:** Opinions

Հարգելի Ժիրայր Սեֆիլյան,

Օրեր առաջ հայկական կայքէջերում հայտնվել է Ձեր կոչը, ուղղված սփյուռքահայությանը՝ «եկեք մեզ հետ պայքարելու»: Նման կոչը, նման հարցադրումը մի քանի հարցեր է առաջացնում... Նախ այդ «մեզ»ը, ովքե՞ր եք, ո՞ր ծրագրի շուրջ եք հավաքվել, ի՞նչ ծրագրով եք պայքարը սկսել, կամ սկսելու, ի՞նչ է այդ պայքարի նպատակը, ինչպիսի՞ ընթացք է ունենալու այդ պայքարը, ինչպիսի՞ մեթոդներով է ընթանալու պայքարը և ինչպիսի՞ ելք է սպասվում:

Հարգելի Ժիրայր Սեֆիլյան,

Օրեր առաջ հայկական կայքէջերում հայտնվել է Ձեր կոչը, ուղղված սփյուռքահայությանը՝ «եկեք մեզ հետ պայքարելու»: Նման կոչը, նման հարցադրումը մի քանի հարցեր է առաջացնում... Նախ այդ «մեզ»ը, ովքե՞ր եք, ո՞ր ծրագրի շուրջ եք հավաքվել, ի՞նչ ծրագրով եք պայքարը սկսել, կամ սկսելու, ի՞նչ է այդ պայքարի նպատակը, ինչպիսի՞ ընթացք է ունենալու այդ պայքարը, ինչպիսի՞ մեթոդներով է ընթանալու պայքարը և ինչպիսի՞ ելք է սպասվում:

Չգիտեմ ինչքան եք ծանոթ սփյուռքի իրականությանը, չգիտեմ նաև, թե սփյուռքի զանգվածը ինչպես կ'արձագանքի Ձեր կոչին: Այնուամենայնիվ սփյուռքում կան անհատներ, ովքեր հայաստանաբնակ հայության հետ տագնապած են և փորձում են իրենց գրություններով, կամ անձնական կապերով, ինչ որ չափով օգնել Հայաստանի ներսում դիմադրական շարժումներին: Դրանցից մեկը Արամայիս Միրզախանյանն էր Շվեդիայից: Անցյալ տարի հուլիսին նա իր հետևյալ հոդվածում՝

***«Առանց ձախ գաղափարախոսություն ունեցող կուսակցությունների, Հայաստանի քաղաքական համակարգը կայունացնել հնարավոր չէ»***, գրեց.

«Հայաստանի կուսակցություններն իրենց գաղափարախոսությամբ ու ըստ տնտեսական պլատֆորմի, ազատ շուկայական կապիտալի դիկտատուրայի պաշտպաններ են: ***Հայաստանի քաղաքական սանդղակի ձախ կողմը լիովին դատարկ է , ուստի խախտված է երկրի հասարակական, տնտեսական, սոցիալ-ապահովության ու աշխատանքի իրավունքների բալանսը: Այս դիսբալանսը երկրում տիրող բոլոր չարիքների աղբյուրն է հանդիսանում***:

*Կուսակցությունների բաշխման սանդղակի ձախ կողմը, բնականաբար, պետք է զբաղեցներ Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը՝ ՀԿԿ-ն , սակայն այսօր այն լուսանցքային դերակատարություն ունի երկրի քաղաքական- տնտեսական կյանքում (այլ քննարկման նյութ է): Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան ՍԴՀ Կուսակցությունը ու կանաչների կուսակցությունը կարող էին տեղ գրավել սանդղակի ձախ կողմում, սակայն համախմբվելով ՀԱԿ-ի կազմում, տեղավորվեցին աջ կողմում: ՀՅԴ-ն*

*տեսականորեն որպես ընկերավարական կուսակցություն, պետք է լիներ ձախ կողմում, սակայն իր հաստատուն տեղն է գրավել հակասոցիալիստական, աջ-բուրժուական կուսակցությունների կողքին:*

*«Սարդարապատ» շարժումը տեսականորեն կարող է հավակնել համալրելու սանդղակի ձախ կողմը, որպես գաղափարական իրական ընդդիմություն:*

***Քաղաքական ուժերի այս փաստացի տեղաբաշխվածությունը խոսում է այն իրողության մասին, որ Հայաստանում տիրում է մոնոպոլ-կապիտալիստական, միաբևեռ քաղաքական և տնտեսական համակարգ:***

***Աջ կուսակցությունները, իրենց քաղաքական ու տնտեսական բնույթով, ազատ շուկայական տնտեսության, կապիտալիստական շահագործող սիստեմի պաշտպաններն են, երկրում տիրող այսպիսի համակարգում վերանում է ընդդիմություն հասկացողությունը:***

*Ձախ ուժերի բացակայությունը, աջ ուժերին հնարավորություն է տալիս անկաշկանդ ու անարգելք շահագործել և աղքատության շեմին կանգնեցնել աշխատող, գյուղացի, ծառայող դասակարգին:* ***Քանի դեռ աշխատավոր գյուղացի դասակարգը կյանքի չի կոչել իր շահերը պաշտպանող կուսակցություններ, արհմիություններ, Հայաստանի քաղաքական տնտեսական կյանքը մնալու է անկառավարելի:***

*Բոլոր այն երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, գաղափարական ընդդիմության՝ (feedback)-ի բացակայության պատճառով ստացվում է բաց, միաբևեռ, բարձր ամպլիտուդաներով տատանվող անկայուն սիստեմ:*

*Համակարգի անկայունությունը իր հետ բերում է սոցիալական ու քաղաքացիական իրավունքների անտեսման, չքավորության ու արտագաղթի ազգակործան երևույթներ»:*

Այո, իրոք որ Հայաստանի, կամ նման երկրների համար, մեծագույն չարիք է ձախ գաղափարախոսությամբ՝ ուժեղ, համատարած ժողովրդականություն վայելող կուսակցության բացակայությունը: Թեև Հայաստանում կան ընդդիմադիր ձախ ուժեր, բայց առայժմս իրարից տարանջատ են և թույլ: Այստեղ դարձյալ գլուխ է բարձրացրել հայկական ավանդական հիվանդությունը: Ամեն մարդ ցանկանում է իր կուսակցությունը ունենալ, իր գաղափարախոսությունը, իր պայքարը միայնակ տանել, միայն ինքը և ինքը: Այդ գիտենք բոլորս, այդ հիվանդությամբ տառապում ենք բոլորս և քանի որ դա այդպես է, ապա կոչերն ու հրավերներն ու ահազանգերը կմնան անարձագանք: Թե ինչպես կարելի է միասնության հասնել և հիմը դնել բոլորի համար ընդունելի ձախ, ասենք՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, դա կախված է Հայաստանի՝ առայժմս իրարից տարանջատ ընդդիմադիր ուժերի՝ խոհեմությունից, քաղաքական հասունությունից և նրանց փոխզիջման գնալու ընդունակությունից:

Նման երկրների համար նաև մեծ չարիք է օրենսդիր և գործադիր մարմինների սերտ շաղկապվածությունը և անկախ արդարադատության բացակայությունը: Յուրաքանչյուր նոր կուսակցության գործունեությունը, երբ նա իշխանության գլուխ է անցնում, կարելի է գնահատել նրա մտադրումից՝ թե նա որքան է պատրաստ բարեփոխման ենթարկել այդ բնագավառները և արդյո՞ք նա իրոք գործադրում է իր խոստումները:

Այստեղ մեզ կօգնի ուսումնասիրել Եվրոպայի երկրների վերջին հարյուր տարվա պայքարի փորձը, քանի որ Եվրոպայի ժողովուրդների, մասնավորապես Գերմանիայի ժողովրդի պայքարի պատմությունը՝ դեմոկրատիայի, սոցիալական հավասարության և արդարության, դատարանների անկախության և հասարակական այլ բարեփոխումների համար, եղել է դասակարգային՝ հաղթանակների և պարտությունների երկարատև պայքար: Այդ պայքարը մղել են ձախ ուժերը, Կոմունիստական Կուսակցությունը (1918-ից KPD), բայց հիմնականում Սոցիալ-դեմոկրատական Կուսակցությունը (1890-ից SPD), որի 150 ամյակը նշվում է այս օրերին: Վերջին 30 տարին քաղաքական ասպարեզ են իջել նաև կանայքները: Հայտնի է, որ առաջին երկու կուսակցությունների տարաձայնությունը, հաճախ նաև բացահայտ թշնամանքը, Վայմարյան Հանրապետության ժամանակ (1919-1933), նպաստեցին երկրում ֆաշիստական վարչակարգի հաղթանակին: Կոմունիստական Կուսակցության (KPD) և Սոցիալ-դեմոկրատական Կուսակցության (SPD) տարբերությունը այն էր, որ (KPD)-ն քարոզում և ձգտում էր հեղափոխության միջոցով հասնել իշխանափոխության, հաստատել բանվորական դիկտատուրա և ստեղծել սոցիալիստական հասարակարգ, իսկ (SPD)-ն ձգտում էր քայլ առ քայլ, խաղաղ միջոցներով աստիճանաբար պայքարել աշխատավորության շահերի և ազատ, դեմոկրատական ընտրությունների միջոցով հասնել իսկական ժողովրդական իշխանափոխության և ռեֆորմների միջոցով վերափոխել պետական ապարատը, վերացնել հնի մնացորդները:

Կարելի է վստահորեն ասել, որ այսօրվա Գերմանիայի, Սկանդինավիայի, Ֆրանսիայի և Եվրոպայի այլ զարգացած երկրների, տնտեսապես և քաղաքականապես կայուն և սոցիալապես հավասարակշռված իրավիճակը, այդ երկրներում իսկական ժողովրդավար սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների երկարատև, համառ պայքարի արդյունքն է:

Այո, այդ պայքարը եղել է երկարատև, հաղթանակներով և պարտություններով լի, այն եղել է ճկուն և այսօր էլ այն դեռ շարունակվում է, գլոբալիզացիայի, մարդկային հասարակության փոփոխությունների, դասակարգերի միջև ազգային հարստության փոփոխության և եկամուտների հսկայական տարբերության և տեղաբախշման պատճառով: Պարզ է, որ այս երկրներում էլ դեռ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները շատ հեռու են իրենց՝ «դեմոկրատական սոցիալիզմ» ստեղծելու նպատակից, բայց 20-րդ դարի ամենահայտնի փիլիսոփաներից՝ Կարլ Պիպերի

բնորոշմամբ, «թեև այդ հասարակարգերը շատ թերություններ ունեն և չի կարելի դրանք իդեալական համարել, սակայն ոչ մի ժամանակներում և ոչ մի տեղ մարդկությանը դեռ չի հաջողվել նման արդար և ժողովրդավար հասարակարգեր ստեղծել»: Ի միջի այլոց Եվրոպայի այն երկրներում է իսկապես ժողովրդական հասարակարգ ստեղծվել՝ ազատ կաշառքից և բարեկամական կապերից, որտեղ ուժեղ են եղել սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, և իրենց պայքարում հետևողական ու անկաշառ են եղել:

Իհարկե որ այս ամենը բոլորին պարզ է, ես այստեղ դրանք հիշատակեցի, ցանկանալով միմիայն զուգահեռ անցկացնել Հայաստանի ներկայիս իրավիճակի և այդ երկրների անցյալի իրավիճակի միջև և որ Հայաստանի քաղաքական, հասարակական ուժերին շատ կօգնի և կարող է նրանց ուղեցույց հանդիսանալ այդ երկրների համատասխան ուժերի պայքարի հարուստ փորձը:

Ո՞րն է ելքը Հայաստանի պարագայում, բռնի հեղափոխությո՞ւնը կամ հնշխանափոխությո՞ւնը, ո'չ, դա ազգակործան է լինելու: Ուրեմն պետք է սկսել զրոյից, նախ պետք է հիմնադրել սոցիալ դեմոկրատական կուսակցություն, որի ծրագիր կանոնադրությունը կարող է հարմարեցվել Եվրոպայի համապատասխան կոսակցությունների ծրագրերի և կանոնադրության հետ: Հետո աստիճանաբար, քայլ առ քայլ պայքարել աշխատավորության, գյուղացիության, չքավոր դասակարգի, ինչպես նաև ուսանողության և երիտասարդության շահերի համար: Ժամանակը ցույց կտա, թե որքանով է հետևողական և արդար  մղվում այդ պայքարը և, եթե դա իրոք այդպես է լինելու, ապա նրա քայլ առ քայլ հաջողությունները, որքան էլ որ դրանք փոքր ու աննշան լինեն,  այդ խավերի մոտ կառաջացնեն վստահություն և այդ կուսակցությունը կարժանանա նրանց օժանդակությանը:

Հարգանքներով՝

Սամվել Հովասափյան

Բեռլին, Մայիս 2013